

հիշող կը նշանակէ ախոռապետն ասպատա-
տանին արքային Պարսից:

Բ. Դաւթի որդւոց փայլն առանց նսե-
մացնելու խՈՌԱՊԵՏԸ մարթ է ընդունել կամ
Comes stabuli, Connétable, Գունդ-
ստապէլ, ըստ հայումն ախոռապետ, կամ
խուրապետ, որ է Դպրապետ, դատաւոր,
ընթերցող, քահանայ և այլն:

Գ. ՇԱՀՆՈՒՐԱՊԵՏ == ՇԱՀՆՈՒՐԱՊԵՏ,
Արքունի Դպրապետ, որ սեփականեց Հայոց
Հազարապետի պաշտօնն Մարգարանութեան
շրջանին:

Հ. Գ. ՇԱՀԱՊԵՏԵԱՆ

ՄՄԱՅԱՆԻ ԶԱՅԱՐՄԱՅԱԼ ԳԱԽԱՐԸ

(Աշտի-էր-էր - Պարսի-էր - Նաւ-էր - Բի-էր)

(Շար. տես Բազմ. 1924 էջ 68)

4. Ներքին - Քօնարք

Սա փուած է Լիվանեան գիւղի հարաւային
կողմը, մէկուկէտ վերստ հեռու մի ընդարձակ
տարածութեան վրայ և նոյնպէս զուտ հայա-
բնակ է: Գիւղացիներն ասելով՝ գիւղի անունը
ծագել է պարսկերէն «քօնա - արք» բառից, որ
նշանակում է հին շինութիւն, պալատ: Ննուտ
գիւղի կից եղել է Քօնարք անունով մի գիւղ,
որ բնակւելիս են եղել քեհեղները: Աժմ այդ
տեղը աւերակ է և կոչւում է «խարաբղալէ»: Նայե-
րը նրա կից հիմնել են մի նոր գիւղ և
անանել Ներքին-Քօնարք, որի արևմտեան, հիւ-
սիսային և հարաւային կողմերը զարդարած են
բարդիներով և բոխիների տնկարաններով, իսկ
արևմտեան կողմը փուած է պօտանը, ուր գիւ-
ղացիները ցանում են վարունգ, դդում, ձմերուկ,
քալ, արևածաղիկ, գետնախնձոր, եգիպտացորեն
և այլն:

Գիւղը չընթացաւ և քառակուսի ցեխալէն
պարսպով և ունի մի դարբաս. բաժանւած է
երկու թաղամասի՝ Վերին - Բաղան և Յածի -
Բաղան: Տները երկյարկանի են և շինւած կողք-
կողքի, իսկ փողոցները ծուռ ու մուռ են և
կեղտոտ:

Հայերի այստեղ հաստատւելը 29 տարւայ
պատմութիւն է. եկել են 1891 թւին, Մամու-

ռանից, Լիվանեանից, Մամուրայից և Ջահար-
մահալի միւս հայաբնակ գիւղերից: Աժմ նրանց
ընտանիքների թիւը հասնում է 55ի, 241 շնչով,
որի 12-ը արական և է 112ը իգական, ընդա-
մէնը 241 հոգի: Սրանից 15 տուն խօշընչին են.
պանդխտութեան մէջ գտնւում են չորս հոգի:

Գիւղն սմբողջ վեց դօնգ է, որի չորս մասը
պատկանում է Սարգար-Ջանիկին (բախտարցի
Նասիր խանին), իսկ երկու մասը՝ Սօլթուն Մահ-
մէտ խանին: Գիւղացիները հողագործ և են. նրանք
մշակում են հողատէրերի հողերը և բերքի 1/4
մասը տալիս են նրանց: Նաեւ տարեկան վճա-
րում են.

Կովին 2 զոան
Էգ ձիուն 3 »
Շորուն 3 »
Ուշխարին 10 շալի

Հողի մեծ մասը շրովի է և փոքր մասը դէմի.
հերկում են վէցիկով: Տեղական ընթերն են
ցորեն, գարի, հովար, կակոու, կտաւահատ,
ոսպ և այլն: Օգտւում են «Շահբուլաղի» աղ-
բիւրներից, որոնք բոխում են Քեհալար սարի
լանջից և մի փոքրիկ առու կազմելով՝ ոլոր -
մուր պտոյտներով զալիս են Ներքին - Քօնարքի
արևմտեան կողմը և բաժանւում երկու հիւղի,
որոնցից մէկը գիւղի արևմտեան կողմից օձա-
պտոյտ հոսելով՝ ոռոգում է հիւսիս - արևմտեան
կողմի արտերը, իսկ միւսը ոլորապտոյտ ան-
ցնում է դէպի հարաւ և ոռոգում է հարաւ - ա-
րևելեան կողմի արտերը:

Գիւղի ունի մի եկեղեցի Ս. Սարգիս անունով,
որ կառուցւել է 1895 թւին. զա բարձր գմբէ-
թով, ցեխալէն և անպաճոյց մի եկեղեցի է, որ
ունի երկու ձեռագիւր աւետարան - «Ջրէֆոր»
և «Ս. Գիորգ»: Գրանցից առաջինը արծաթեայ
կազմով, բամբակի թղթի վրայ գրւած, հաս-
տափոր մի աւետարան է, իսկ երկրորդը նոյն-
պէս արծաթեայ կազմով, թղթեայ ընտիր մի
աւետարան է, որի առջին 15 թերթերը զար-
դարւած են ոսկեգօծ նկարներով, որոնք նկար-
չութեան արեստի տեսակէտից հետաքրքրական
են, որովհետեւ նկարւած են բաւական աշուղ վեր-
ջինով: Նրանց նիւթը վերցրած է քրիստոնէա-
կան պատմութիւնից, սկսած Յիսուսի ծնունդից
մինչև խաչելութիւնը:

Գիւղը դպրոց չունի, երեխաները յաճախում
են մօտակայ Վերին - Քօնարքի դպրոցը: Գիւ-
ղացիները մեծամասնութեամբ խարխափում են
խոր տգիտութեան մէջ:

Գիւղում գոյութիւն ունի «Այլադոյս» միու-
թիւնը, որ հիմնւել է 1915 թ. զեկտեմբեր 31ին

Պ. Վրթանէս կարապետեանի և Պ. կարապետ Մանսուրեանի նախաձեռնութեամբ: Ընկերութիւնն ունի իր պաշտօնական ծրագիրը, որի գլխաւոր մասերն են:

Ա. Ընկերներին վարժեցնել զաղտնապահութեան, ընկերասիրութեան և քաղաքավարութեան:

Բ. Օգտուել ընթերցանութեան գրքերից, որոնք ձեռք կ'երբուրն սօսակազ գիւղերից, մինչև այն ժամանակ, երբ ընկերութեան կարողութիւնը կ'իսոստանայ ունենալ գիւղի վերաբերեալ մի յատուկ գրադարան:

Գ. Վերացնել անդամների միջից չար նախանձը, ինքնամոլութիւնը, եսասիրութիւնը, թթու հայրենասիրութիւնը (չովինիզմը) և վարժեցնել սրանց հակառակ յատկութիւնների, այն է ազնիւ քնաւորութեան և անկէ ծաւալաւորութեան:

Դ. Պննութեան ենթարկել բոլոր էական խնդիրները, հասարակական ցոյցերի և շարժումները:

Ե. Եթէ մի որ և է անկարգութիւն պատահի ընկերութեան մէջ, յարգելի անդամները պարտաւոր են քննել և գտնելով պատճառը՝ վերջ տալ:

Ընկերութիւնն ունի մի գրադարան, ուր կայ մօտ 70 հատոր հայերէն գրքեր: Այժմ անդամների թիւն է 20:

Բացի «Արշալոյս» միութիւնից, գիւղում գոյութիւն ունի նաեւ «Նոր» Սերունդ» պատանեկան ընկերութիւնը, որ սկիզբ է առել 1918 թ. Սեպտ. 10ին Պ. կարապետ Մանսուրեանի նախաձեռնութեամբ: Ընկերութեան ծրագրի էական մասերն են.

Ա. Ընկերներին վարժեցնել հայրենասիրութեան, ընկերասիրութեան, քաղաքավարութեան, զաղտնապահութեան և ուրիշ լաւ յատկութիւնների:

Բ. Աշխատել վերացնելու ընկերների միջից չար նախանձը, եսասիրութիւնը, օտարատեցութիւնը, անկրթութիւնը և վարժեցնել բոլորի սրանց հակառակ յատկութիւնների:

Գ. Պարապալել ինքնաբարգաւաճմամբ, տարածել ընթերցանութեան սէրը իրենց և շրջապատի մէջ:

Դ. Այն տարին, որ լինում է ուսուցիչ կամ ուսուցչուհի, օգնել նրան նիւթապէս (ի հարկէ ընկերութեան կարողութեան համեմատ) և գնել որոշ չափով գրքեր աղքատ աշակերտների համար:

Ե. Ընկերութեան համար կազմել մի ճոխ գրադարան, որից կարող է օգտուել գիւղի ամբողջ հասարակութիւնը: Վարչութեան գիտութեամբ գրքերը կարող են տարուել նաև ուրիշ գիւղեր:

Այս գիւղում աչքի է ընկնում միութեարար կան մի երեխոյ. դա կալւածատէր Սարգար շանկի դէպի գիւղացիները ցոյց տաւ ազնիւ և բարեացակամ վերաբերմունքն է, Նա 1913 թ. ին գիւղացիներին տուել է 200 ոչխար, որպէս զի ձրի օգուեն նրանց կաթից, բլդից, գառից և միայն տարեկան 3¹/₂ զաւն շնչին հարկ վճարեն: Բացի այդ՝ 1916-20 թ. երաշտի և սովի տարիներում օգնել է գիւղացիներին, այսպէս՝

1916 թ.ին տուել է	2600 լիտր ցորեն և գարի
1917	2200 »
1918	570 »
1919	1400 »
1920	800 »

Ընդամենը 7070, որից 1700 լիտրը

նա զիջել է գիւղացիներին:

Միւս գիւղատէրը՝ Սոյունիս - Մանսուրեանը այնքան էլ չի մտածում գիւղացիների տնտեսական դրութեան մասին: Նա այս տարի (1920թ.) երկու ձի է ուղարկել գիւղը, որպէս զի գիւղացիները պահեն իրենց հաշիւն: Բայց գիւղի համար մի պատուհաս է դարձել խանի զաբէթը՝ Ռէյիս-Մամէդը-Շաշէմը, որ իր քանաճոյքի համաձայն հարստահարում և կեղեքում է գիւղացիներին, օր. Սարգարշանկի գիւղացիներին արւած ցորենի 1000 լիտրին 100ը ինքն է իւրացրել:

Գիւղի քանդխուղան է պ. Մանուկ Մկրտչեան, որ չնորհիւ իր ճարտար լեզու կարողանում է խանի առաջ պաշտպանել գիւղացիների շահերը, բայց երբեմն էլ գիւղի զաբէթի հետ ձեռք ձեռքի տալով՝ հարստահարում է գիւղացիներին: Նա զբաղում է նաև վաշխառութեամբ: Այժմ գիւղացիներից 42 հոգի պարտական են նրան 337 թուման փող և 2247 լիտր ցորեն և գարի:

Գիւղում կայ մի կրպակ և մի շրաղաց, Գե. Եղգամանտունը փութած է գիւղի հիւրիս - արևմտեան կողմը, 1000 քալ հեռավորութեան վրայ:

Գիւղից 80 քալ հեռու, դէպի արևելք ուղղութեամբ ցցւած է երկսուսկէս զառ երկաթուղի (գիւղացիների փսլով՝ նոյնքան էլ հողի մէջ է) մի քար. դա քեանքների ժամանակից մնացած պատմական մի հնութիւն է, որի ա-

րևելեան երեսը զարդարած է արձանագրութիւնով, որ հակառակ մեր ցանկութեան չկարողացանք կարգալի:

5. Վերին - Քօնարք

Դերքին - Քօնարքից մի քառորդ ֆարսան հենու, դէպի հարաւ, մի ընդարձակ դաշտի վրայ փռած է Չահարմաշ գաւառի ամենահայաւատ այս գիւղը, որի չորս կողմը զարդարած է բարդինների և ուռնինների տեկարաններով:

Գիւղն իր անունն ստացած է «Քօնա - արք» բառից, որ նշանակում է հին շինութիւն, պալատ, որ ժամանակի ընթացքում, ժողովրդի բերանում աղաւաղել և դարձել է Քօնարք, որ 70 տարւայ հիմնարկութիւն է, ուր հայերը հաստատել են 38 տարի առաջ, 1882 թիւն. նրանք եկել են գլխաւորապէս Լիւվսիանից, Բուլղաշուից (այժմ աւերակ է), Աղբուլաղից և այլ հայաբնակ գիւղերից: Այժմ բաղկացած են 138 ընտանիքից, 649 շնչով, որի 333ը արական է և 316ը իգական: Դրանից 65 տունը խօշնդին են, իսկ պանդուխտութեան մէջ են 100 հոգի, որոնք գտնուում են Թէհրան, Նոր - Զուլաբ, Դասթերի, Բուշէր, Լնդկաստան և այլ քաղաքներում:

Գիւղը բաւական հարուստ է ջրով. ունի չորս ջրմուղ և երկու առու, որոնք տնտեսական տեսակետից նշանակալից դեր են խաղում: Այդ ջրմուղներից առաջինը գտնուում է գիւղի հարաւ - արեւմտեան կողմը, գիւղից 600 քայլ հեռաւորութեան վրայ, խանի դալէի հետեւում. դա սկիզբ է առնում վաստիկանու դաշտից և զալիս է դէպի հիւսիս և խառնուում ջրաղացի ջրի հետ, յետոյ իր ընթացքը դէպի արեւելք հիւսիս ուղղելով՝ ոռոգում է այդ կողմի արտերը, ապա գնում, միանում է Գուլուկերտի գետակին: Երկրորդը գտնուում է գիւղի հարաւ - արեւելեան կողմը. սկիզբ է առնում Մուշիգանու դաշտից և օժապոտոյ հոսելով՝ ոռոգում է գիւղի արեւելեան կողմի արտերը, ապա գնում, գրկախառնում է Գուլուկերտի գետակին: Երրորդը գտնւում է գիւղի արեւմտեան կողմը, 20 քայլ հեռաւորութեան վրայ. սկիզբ է առնում Վլի արտերի միջից և ոռոգում է գիւղի հիւսիսային կողմի արտերը, ապա Զառուի կամրջի վրայից անցնելով՝ գնում ոռոգում է խանլարիանի - չամի և Գերտուփալանի արեւմտեան կողմի արտերը: Զորտերը գտնւում է գիւղի արեւելեան կողմը. դա սկիզբ է առնում գիւղից 700 քայլ հեռու գտնուող խնկու դաշտից, որ օժապոտոյ հոսելով՝ միանում է երկրորդ ջրմուղի հետ և ոռոգում է

գիւղի հիւսիսային կողմի արտերը: Սակայն գիւղի զարգը կազմում են երկու փոքրիկ առուները, որոնք օժապոտոյ հոսում են գիւղի հիւսիսային և հարաւային կողմերով. դրանք սկիզբ են առնում Բիդազու աղբիւրներից, որոնք ապա միանալով՝ կազմում են մի առու, որ քիջալէն հոսում է դէպի հիւսիս - արեւելք, գիւղից 200 քայլ հեռաւորութեան վրայ և բաժանւում երկու ճիւղի. մի ճիւղը՝ վերին - Քօնարքի հիւսիսային կողմից օժապոտոյ հոսելով՝ ոռոգում է գիւղի հիւսիս - արեւելեան կողմի արտերը, ապա իր ընթացքը դէպի արեւմուտք ուղղելով՝ գնում, միանում է Գուլուկերտու գետակին, իսկ միւս ճիւղը՝ ուր - մուր պտղատներով հոսում է դէպի հարաւ և ոռոգում է գիւղի հարաւային և արեւելեան կողմի արտերը, ապա գնում, գրկախառնում է Գուլուկերտու գետակին:

Գիւղը բաղկացած է չորս թաղերից. — 1) Դրսի Բադան, 2) Մէշի դալէ, 3) Ափոնց Բադան և 4) Մէշաւեզահի Բադան: Տները երկու և մասամբ էլ մի յարկանի են, շինւած են յարդախան շաղախաւած ցեխից:

Հողատիրութեան ձևը խանական - կալածաւտիրական է. հողատէրն է Սարգար Ֆադ (Մամ - Ռէզա խան բախտիաքին), որ ունի 72 հաբբայ հող: Գիւղացիները հողագուրկ են. նրանք մշակում են աղայի հողերը և բերքի $\frac{1}{4}$ մասը տալիս են նրան: Դաւ տարեկան վճարում են.

Ուշարին	10 շայի
Վովին	2 դաւան
Էգ ձիւն	3 »
Ջորուն	3 »

Բացի այդ՝ խանը տարեկան առնում է 7200 լիտր դարման և 800 լիտր կանաչ թուս (սովզու):

1919 թ. խանը գիւղի արեւելեան կողմում, 1000 քայլ հեռաւորութեան վրայ, շինել է տալիս մի կամուրջ, որի քարերի մի մասը բռնութեամբ բերել է տալիս գիւղացիներին, աշխատեցնելով նրանց նոյն իսկ կիւրակէ օրերը: Գիւղացիները կամրջի համար սարից բերում են 3000 թուման որժոյղաճաճ քար, բայց խանը դրամի փոխարէն տալիս է 2000 լիտր ցորեն և գարի, լիտրը հաշւելով 5 դաւան: Սակայն գիւղացիներին ամենից շատ նեղացնում է կալածաւտիրով կողմից նշանակած վերակացուն՝ Ռէզա - խանը: Բարձրահասակ և հաստուկից մի վաշխառու է նա, որ կստարեալ պատուհան է դարձել ժողովրդի գլխին: Դա քմահաճ պատմիչն էր և նշա-

նակում և անխնայ կերպով հարստահարում գիւղացիներին, օր. գիւղացուն աշխատեցնում է խանի գործերի վրայ և ստացած օրավարձի մի քառորդ բաժինն ինքն է իւրացնում. շատ անգամ էլ չնչին պատուակով գրկում է աշխատաւոր գիւղացիներին իրենց օրավարձից:

Գիւղի կրթական գործը, համեմատելով միւս գիւղերին, բաւական միջիթաւական է. գիւղին կից, արևմտեան կողմում փութած է «Վալիսն» դպրոցը, որ հիմնել է 1904 թիւին, նախաձեռնութեամբ Բագրուս վարդ. (այժմ եպիսկոպոս) Վարդապարեանի և օժանդակութեամբ Բագուս, բնակ Ասուածատուր Վալեանի, ի յիշատակ իր ամուսնու հանգուցեալ Մարիամ Վալեանի: Դա մի յարկանի, փոքրիկ պարտիզով և ծառաստաւ, նով զարդարած մի շինութիւն է, որ չընպատւած է քառակուսի պարսպով, իսկ արևելեան կողմից հոսում է մի փոքրիկ առու:

Շէնքը բաւական յարմար է. բաղկացած է չորս սենեակներից մի սրահով, որի մէջ կառուցւած է թատերաբեմի նման մի բան, ուր ուսումնական տարւայ ընթացքում ուսուցիչ-ուհիները երբեմն ներկայացումներ են տալիս: Սրահի աջ կողքին գտնւում է գրիմի սենեակը, իսկ ձախ կողքին՝ մի դպրոցարան, ուր կայ մասնաւորապէս Ձ(Ս) կտոր հայերէն գրքեր: Թէ ի՞նչ տիպի դպրոց է, ի՞նչպէս է կառավարւել անցեալում, ի՞նչ արդիւնք է ցոյց տւել, ոչինչ յայտնի չէ, որովհետեւ ոչ մի դոկումէնտ չկայ: Միայն այսօրան յայտնի է, որ 1911 թիւից առաջ փոքրիկ Հայկազեան Ուսում. խորհուրդը հոգացել է դպրոցի անտեւտական ծախսը:

Դպրոցում յաճախում են ձմեռը 200ից աւելի երկսեռ շաւկերտներ, իսկ զարնան վերջերը և ամառը նրանց թիւը հետզհետէ պակասում է երկրագործական աշխատանքների պատճառով:

Գիւղացիների ° 80 գրագետ են:

Գիւղի կենտրոնում գտնւում է Ս. Գեորգ եկեղեցին. դա քարէջայէն, բարձր գմբէթով, բաւական եղեղեղիկ մի եկեղեցի է. հիմնադրւել է 1882 թիւին և նորոգւել 1897 թ. Զուլիսի 29ին: Եկեղեցում կայ «Ս. Գեորգ» անուանով ձեռագիր մի աւետարան. դա հաստափոր, 616 էջից բաղկացած, անպաճոյճ մի աւետարան է, որի առջևի կողքը կոտախած (արծաթեալ) է: Եկեղեցին ունի նաև զանգակատան նման մի բան, զարդարւած երկու զանգակներով:

Գիւղում գոյութիւն ունին երեք ընկերութիւններ. — 1) «Կայսերի» աղքատախնամ, 2) «Այրփիւ» և 3) «Ընթերցասիրտ»:

«Կայսերի» աղքատախնամ միութիւնը հիմն

ւել է 1911 թ. Զուռուար 18ին, մի քանի երիտասարդների նախաձեռնութեամբ: Միութեան ծրագրի գլխաւոր մասերն են.

Ա. Դիւթիապէս օգնել գիւղի չքաւոր և կարօտեալ աղքատներին և հարկ եղած դէպքում նաև օտար աղքատներին, այն դէպքում, երբ կը դիմեն Միութեան:

Բ. Միութեան ոչծերը ներած չափով պաշտպանել ճշւած դասակարգի շահերը:

Գ. Աշխատել թերթեր և օգտակար գրքեր բերել տալ, թէ՛ անդամներին և թէ՛ գիւղացիներին զարգացման համար:

Միութիւնն իր ծրագրին միացրել է նաև դրական գործը: Դա 1918 սովի տարին 1680 դռանի ցորեն է զնել, 1054 դռանի ալիւր և հաց պատրաստելով՝ էժան գնով ծախել է վերին — Քօնարքի չքաւոր գիւղացիներին: Բացի այդ՝ նոյն 1918 թիւին 30 թուման փող է նւիրել Դոր-Ջուղայի «Արքատախնամ» յանձնախմբին:

«Աթիւ» միութիւնը հիմնւել է 1914 թ. Փետրուար 7ին, օր. Սօֆիա Էլիագեանի նախաձեռնութեամբ. նա դպրոցի գիտական աշակերտներին իր շուրջը համախմբելով՝ բացատրում է միութեան նշանակութիւնը և կազմում «Աշակերտական» մի միութիւն, որ 1918թ. Սեպտեմբեր 2ին, իր 47րդ Ընդհ. ժողովում փոխում է իւր անունը և կոչւում «Աթիւ» միութիւն, որի գլխաւոր նպատակն է ծառայել հայ ժողովրդին և գիւղական դպրոցին:

«Ընթերցասիրտ» միութիւնը սկիզբ է առել 1918 թ. Դեկտեմբեր 1ին պ. պ. Գասպար Տէր-Բարսեղեանի, Սարգիս Մադաթեանի և Մինաս Մանսուրեանի նախաձեռնութեամբ: Սկզբում ընկերութիւնը Թատերասիրաց անունն է կրում, բայց յետոյ՝ 1919 թ. Զուլիս 27ին կոչւում է «Ընթերցասիրտ» Միութիւն, որի կէտ նպատակն ընթերցանութեան սէրը տարածել գիւղացիների մէջ: Միութիւնն իր նպատակը իրագործելու համար ընդգծել է հետեւեալ տասը կէտերը.

Ա. Բերել տալ գրքեր ու թերթեր ժողովրդի առաջադիմութեան նպատակով համար:

Բ. Կապ հաստատել քաղաքական միութիւնների հետ և նրանց միջոցով բերել ցանկացւած գրքերն ու թերթերը:

Գ. Գրքերից և թերթերից պէտք է օգտւեն բոլորը, առանց կուսակցական խտրութեան, այսինքն ընթերցարանը պիտի հասարակաց լինի:

Դ. Հաստատել մի ընթերցարան գրքերի ու թերթերի համար:

Ե. Հաւաքել գիտակցող անդամներ 15 տարեկանից բարձր և շաբաթը մի անգամ ժողով մտնենալ, ժողովրդի կրթութեան համար մտածելու:

Զ. Միութեան նիւթական արհեստներու ամենազարգացած միջոցն է հողագործութիւնը, ուստի պէտք է սեփական գետին ունենալ:

Ը. Ընտրել մի յանձնախումբ, որի պարտականութիւնը պիտի լինի զբաղել խտրութեան խնդրով: Տարին 1-2 անգամ, ձմեռ ժամանակ, ներկայացուցներ տալ միջավայրի համապատասխան: Ներկայացման հասոյթը յատկացնել զբաղարանի օգտին:

Ը. Աշխատել վերջ տալ ժողովրդի միջին վեճերի, այլ և հակառակ կուսակցութիւնները միասցնել և տալ հաւասար ուղղութիւն:

Թ. Աշխատել ժողովրդի մէջ զբաղեցնելի թիւը չափազանցել, տալով նրանց հայրենասիրական և ազգասիրական ուղղութիւն:

Ժ. Աշխատել ժողովրդի միջին վերացնել տիրող նախապաշարութիւնները, բերել տալով նրանց դէմ պայքարող զբոյժ:

Ընկերութիւնն ունի մի փոքրիկ զբաղարան, ուր կայ մօտաւորապէս 100 հատոր հայերէն գրքեր: Ընկեր. անդամները շաբաթը մի անգամ տալիս են դասախօսութիւններ:

Գիւղի ունի երկու քանդակուղա, Պ. Պ. Գասպար Աստածատրեան և Սիմէօն Մանասէրեան: Սրանցից առաջինը հին հայեացքներով ու զանազաններով տոգորած տանուտէր է և ունի 15 հարստ թուանի կարողութիւն, որ ձեռք է բերել հարստահարութեամբ, փչացնելով գիւղացիներից մէկին կամ միւսին: Աժմ գիւղացիները պարտական են նրան 5-600 թուման փող և 600 լիտր ցորեն: Ենթոհիւ իր հարստութեան՝ գիւղում ևս որոշ հեղինակութիւն է ձեռք բերել: Երկրորդ քանդակուղան աղքատ, բայց բնական մի անձնատրութիւն է, որ սակայն իր աղքատութեան պատճառով չի կարողանում որոշ դեր կատարել գիւղացիներից ցաւուր կեանքում:

Գիւղի ունի երեք կրպակ և երկու ջրղաց: Գիւղի հիւսիսային կողմը, 500 քայլ հեռավորութեան վրայ փռած է գերեզմանատունը, որտեղ թաղած է պարսկահայ յայտնի աշուշ Ալլահիդիդի և մի քանի հողակոյտի վրայ դրած է անտաշ և անպանծոյ մի քար, առանց արձա-

նագործեան: Իսկ գիւղի հարաւ – արևմտեան կողմը, քառորդ ֆարսախ հեռավորութեան վրայ ընկած է խանի դաշն. դա երրորդական ճաշակով կահաւորած աղիւսաշէն մի շինութիւն է, որ կառուցած է գիւղացիների արիւն – քրտիկով: Ղաշէից մինչև գիւղը զարդարած է ծառուղիով: Այս գիւղը նոյնպէս ենթակայ է թափառաւոր շրջիկ դաշնի զօրքերի ասպատակութիւններին, որոնք իրենց գինւած խմբերով լեռներից գիւղն են իջնում և հանդից տանում գիւղացիների ոչխարները կամ գիւղերով մտնում են նրանց արտերը և հունձը աւարի տալիս:

ՎԻԵՆՆԱ

ՊԱՐՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարումակելի)

ՀԱՅ ԶԵՌԱԳԻՐ ՂՈՒՐԱՆ ՄԻ Ի ՀՆԴԻԱՍ

(Թրգ. Ստեփաննոս Լուսինյանի Իւնիստ)

(Շար. տես Բաղմ. 1924, էջ 166)

Այդ ի վկայութեան Առաքել վարդապետի ի յայտ գալ, թէ եկն Ստեփաննոս իլովեցի ի վանս անդ սրբոյն իշմիածնի յաւուրս կաթողիկոսութեան փիլիպպոս՝ որ ամբարձեալն էր ի զահն հայրապետական յերեքտասաներորդ աւուրն Յուլիանի յամին 1633, փիլիպպոս կաթողիկոս էր նոյնպէս որ ձեռնադրեալ զնա ճետ եմա գիլիսանոսիոն վարդապետական ըստ բանից Դարիժեցեոյն: Եւ ի բանից Առաքելի իմանալ թէ յետ ձեռնադրութեան, Ստեփաննոս վարդապետ փայլեցաւ յասպարիզին Հայ զբաղիտութեան և արկեալ զԻւրեաւ զմաշեկանն ամենեւրան թարգմանչաց միւրոց սկսաւ ճոխացուցանել զՀայ լեզուն. ուրեմն յոյժ հաւանական թուի թէ թարգմանեցաւ և Դորանս այս առ կենդանութեամբ կաթողիկոսին և յառաջ բան զամն 1655, յորժամ հանգեաւ ի Տէր փիլիպպոս կաթողիկոս: Ուրեմն ըստ ամենայն հաւանականութեան թարգմանութիւնս այս կատարեցաւ յամին 1650՝ կամ փոքու իմն յառաջ կամ յետ կիսոյն 17րդ դարուն:

1. Տե՛ս մեր յօդածը Վիեննայի «Հանգիստ Ամս. Երեւանի մէջ, 1924 թիւ 5-6, Մայիս-Յունիս, Ա. Ե.